



ԵՐԱՇՏԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024 Մայիս


Բովանդակություն

<i>1. Ջերմաստիճանի ամսական շեղում.....</i>	<i>3</i>
<i>2. Տեղումների ամսական շեղում.....</i>	<i>3</i>
<i>3. Երաշտի ինտենսիվության ինդեքսներ:.....</i>	<i>4</i>
3.1 Բուսականության վիճակի ինդեքս (VCI).....	4
3.2 Բուսականության նորմալացված տարբերության ինդեքս (NDVI).....	5
3.3 Գյուղատնտեսական սթրես ինդեքսը (ASI).....	5
3.4 Օդերևութաբանական երաշտի ինտենսիվության գնահատումը.....	5


1. Ջերմաստիճանի ամսական շեղում

2024 թվականի մայիս ամսին օդի միջին ջերմաստիճանները հիմնականում եղել են նորմայից ցածր: Ըստ Հայաստանի 43 օդերևութաբանական կայանների փաստացի դիտարկումների տվյալների ամբողջ հանրապետության տարածքում ջերմաստիճանը նորմայից ցածր եղել է 0-1°C-ով:

ERA5-Land գլոբալ ռեանալիզի միջին ամսական ջերմաստիճանների շեղումների քարտեզը բավականին լավ արտացոլում է մայիս ամսվա ջերմաստիճանների բացասական շեղումները Հայաստանի տարածքում:



Monthly Temperature anomalies Armenia
May 2024 (1991-2020 base period), ERA5-Land




2. Տեղումների ամսական շեղում


Հանրապետության նորմայից ցածր ջերմաստիճանն ուղեկցվել է առատ տեղումներով: Մայիսը վերջին 80 տարվա ամենախոնավ մայիսն էր: Հանրապետության հյուսիսային և կենտրոնական շրջաններում տեղումները կազմել են նորմայի 200-220 %-ը: Մնացած շրջաններում տեղումների քանակը մոտ են նորմային:

ERA5-Land գլոբալ ռեանալիզի տվյալների համաձայն մայիս ամսին տեղումների քանակը բարձր էր նորմայից: Հարկ է նշել, որ հյուսիսային շրջանների առատ տեղումները լավ չեն արտացոլված ERA5 տվյալներում:

Monthly Precipitation anomalies (%) Armenia
May 2024 (1991-2020 base period)



Monthly Precipitation anomalies(%) Armenia
May 2024 (1991-2020 base period), ERA5-land




3. Երաշտի ինտենսիվության ինդեքսներ:


3.1 Բուսականության վիճակի ինդեքս (VCI)

Բուսականության վիճակի ինդեքսը (VCI) համեմատում է ընթացիկ NDVI-ն նախորդ տարիների նույն ժամանակահատվածում դիտված արժեքների միջակայքի հետ: VCI-ն արտահայտվում է %-ով և տալիս է պատկերացում, որտեղ դիտարկվող արժեքը գտնվում է նախորդ տարիների ծայրահեղ արժեքների միջև (նվազագույն և առավելագույն): Ավելի ցածր և բարձր արժեքները համապատասխանաբար ցույց են տալիս բուսականության վատ և լավ վիճակի պայմանները:

Ինչպես երևում է FAO կայք էջում հրապարակված մայիս ամսվա VCI-ի քարտեզից Հայաստանի տարածքի մեծ մասում դիտվել են բարենպաստ պայմաններ բուսականության աճի համար:




Vegetation Condition Index (VCI)
May 2024
METOP-AVHRR
WGS84, Geographic Lat/Lon



3.2 Բուսականության նորմալացված տարբերության ինդեքս (NDVI)

Բուսականության նորմալացված տարբերության ինդեքսը (NDVI) ֆոտոսինթետիկ ակտիվ կենսազանգվածի ցուցիչ է, որը ստացվում է չհամեմատելով կլանված տեսանելի կարմիր լույսի և արտացոլված ինֆրակարմիր լույսի քանակը: NDVI-ը սահմանում է -1.0-ից մինչև 1.0 արժեքներ, որտեղ բացասական արժեքները համընկնում են բուսազուրկ տարածքներին: Հայաստանի տարածքի մեծ մասում գերակշռում են դրական NDVI-ի արժեքներ, հետևաբար դիտվել են բարենպաստ պայմաններ վեգետացիայի համար:



3.3 Գյուղատնտեսական սթրեսի ինդեքսը (ASI)


Գյուղատնտեսական սթրեսի ինդեքսը (ASI) ցուցիչ է, որով գնահատվում է գյուղատնտեսական երաշտի ինտենսիվությունը: ASI-ն ինտեգրում է բուսականության առողջության ինդեքսի (VHI) ժամանակային և տարածական պատկերը: ASI-ն գնահատում է չորային ժամանակաշրջանի ինտենսիվությունը և տևողությունը գյուղատնտեսական մշակաբույսերի վեգետացիայի ընթացքում: 35 տոկոսից ցածր VHI արժեք ունեցող տարածքները կրիտիկական են երաշտի չափը գնահատելուց:

Ինչպես երևում է մայիս ամսվա արբանյակային տվյալներից հանրապետության տարածքում գյուղատնտեսական երաշտ չի դիտվել:

I տասնորյակ

II տասնորյակ


III տասնորյակ



3.4 Օդերևութաբանական երաշտի ինտենսիվության գնահատումը


Երաշտի ինտենսիվությունը գնահատվել է Սելյանինովի հիդրոթերմիկ գործակցով՝ ըստ 38 օդերևութաբանական կայանների տվյալների:

Ինչպես երևում է մայիս ամսվա տասնօրյակային քարտեզներից՝ Հայաստանի շրջաններում երաշտային պայմաններ չեն դիտվել:




Երաշտի ինտենսիվությունը գնահատելու համար հաշվարկվել է Ստանդարտացված տեղումների ինդեքսը (SPI)-ը, որը վիճակագրական ցուցիչ է, և համեմատում է տվյալ ամսվա ընթացքում դիտված տեղումների քանակը և այդ վայրում նույն ժամանակահատվածի երկարատև կլիմայական տեղումների բաշխման հետ: SPI-ը հաշվարկվում է ամսական կտրվածքով (SPI1) և եռամսյա կտրվածքով (SPI3):

SWB (Հողի ջրային բալանսը) ինդեքս է, որը հաշվարկվում է ամսական տեղումների քանակի և գոլորշունակության տարբերությամբ:



SPEI-ը երաշտի ինդեքս է, որը հիմնված է կլիմայական տվյալների վրա: SPEI-ն հաշվարկելու համար որպես մուտքային տվյալ օգտագործվում է SWB-ը: Հաշվարկները իրականացվել են R Studio ծրագրային փաթեթով:




Մայիս ամսվա SPI1-ի քարտեզից երևում է, որ հանրապետության կենտրոնական, հյուսիսային և հյուսիս արևմտյան շրջաններում դիտվել են շատ խոնավ պայմաններ՝ պայմանավորված առատ տեղումների քանակով:


SPI3-ը արտացոլում է խոնավ և միջին խոնավության պայմաններ հանրապետության ամբողջ տարածքում:

SPEI քարտեզը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ ամբողջ հանրապետությունում երաշտային պայմաններ չեն դիտվել:


SPI1, May 2024



SPI3, May 2024



SPEI, May 2024



Այսպիսով վերլուծելով փաստացի ջերմաստիճանի և տեղումների շեղումները, ինչպես նաև բուսականության վիճակի ինդեքսների արժեքները կարող ենք եզրակացնել, որ առատ տեղումներով և նորմալից ցածր ջերմաստիճանով պայմանավորված մայիս ամսին հանրապետությունում երաշտային պայմաններ չեն ձևավորվել: